

Արմ.

3-

Ծ Ր Ա Գ Ի Ր
Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ի

ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ V-X ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ
ՀԱՄԱՐ



371

Մ-98

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1936

Պատ. խմբագիր՝ Ս. Հայրապետյան, Լ. Խուզոյան
Տեխ. խմբագիր՝ Գ. Զեյնյան
Սրբագրիչներ՝ Հ. Դուրյանյան, Հ. Մանուկյան

Հրատ. 3793, Գլալ. լիազոր Վ. 1144, Պատվեր 908, Տիրա
Հանձնված է արտադրության 18 հունիսի 1936 թ.
Ստորագրված է արտադրության 8 օգոստոսի 1936 թ.
Պետհրատի տպարան, Յերևան

232-87

14 MAR 2013

1 MAR 2010

Արմ.

3-3882a

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՓԱՅՏԻ ՈՒ ՄԵՏԱՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՐՐԵՐԸ

Ն Ե Ր Ա Մ ՈՒԹ Յ ՈՒՆ

Աշխատանքային ուսուցումը վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցում, նպատակ ունի տեսականում և գործնականում ուսումնասիրել արտադրության գլխավոր ճյուղերը, յեղնելով «գիտության հիմունքներին» (Փիզիկա, քիմիա, մաթեմատիկա, կենսաբանություն և այլն)։

Գյուղական դպրոցի սրալմաններում այդ խնդիրն ավելի նպատակահարմար կլուծվի՝ աշակերտներին գյուղատնտեսության հիմունքներին տեսականորեն ու գործնականորեն ծանոթացնելու յեղանակով։

Այդ բոլորում է նրանից, վոր՝

ա) սոցիալիստական տնտեսությունը հիմնվում է առաջավոր մեքենացած տեխնիկայի վրա (տրակտոր, ավտոմոբիլ, կոմբայն և այլն) ելեկտրոններգիայի կիրարկմամբ, քիմիացման և ագրոտեխնիկայի սխտեմով և դրանով հենց ապահովվում է «Ժամանակակից խնդրաւորիայի հիմունքներն» ուսումնասիրելու անհրաժեշտ բաղա։

բ) Դպրոցի գյուղատնտեսական շրջապատը դպրոցականին գյուղում սալիւս է ավելի մոտիկ և կենսականորեն հասկանալի նյութ։

գ) Դպրոցականները գյուղում սխտեմատիկորեն մասնակցում են իրենց տարիքին մատչելի գյուղատնտեսական աշխատանքներին (դպրոցամերձ հողամասում, կոլտնտեսությունում, ոժանդակ տնտեսություններում)։

Այս ծրագիրը վոչ լրիվ միջնակարգ դպրոցի աշակերտներին

ՀՈՅ. № 14004

232-87

մատչելի ձևով տալիս ե սխտեմատիկ ծանոթություն գյուղատնտեսության հիմունքներին:

Ծրագրի ճիշտ կիրառումը կնպաստի աշակերտների գիտելիքների ամրացմանը («գիտությունների հիմունքները» Ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, կենսաբանություն և այլն) և գործադրմանը՝ սոցիալիստական շինարարության պրակտիկայում:

Ծրագրի հիմքում դրված ե ծանոթություն բուսական և կենդանական որգանիզմի կուլտուրային: Դա խոշոր հանրակրթական նշանակություն ունի և համապատասխանում ե կենսաբանության ծրագրի հիմնական բաժիններին: Ծանոթությունը գյուղատնտեսական մեքենաներին՝ իրականացվում ե գյուղատնտեսական կուլտուրաներն ուսումնասիրելիս, վորպես ինքնուրույն բաժին ուսումնասիրվում ե միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում, յերբ աշակերտները Ֆիզիկայից անհրաժեշտ գիտելիքներ արդեն ձեռք են բերել:

«Տրակտոր» թեման 7-րդ դասարանում անցնում են միայն այն դեպքում, յեթե աշակերտներն ավարտում են վոչ լրիվ միջնակարգ դպրոցը:

Միջնակարգ դպրոցում «տրակտոր» թեմայի ուսումնասիրությունը նախատեսվում ե 10-րդ դասարանում: Այս դեպքում 7-րդ դասարանի ծրագիրը լրացվում ե կաթնատնտեսության մասին այլ աշխատանքներով:

Փայտի և մետաղի աշխատանքների վերաբերյալ պատկերացումները և հմտությունները զարգացվում և ամրացվում են արտադպրոցական խմբակների պարապմունքներում՝ ի հաշիվ հասարակական աշխատանքների ժամերի:

Ծրագիրն առանձին ուղադրություն ե հատկացնում աշակերտների կողմից փորձեր դնելու աշխատանքներին, վորոնք հանդիսանում են դպրոցի կողմից կատարվելիք հասարակական աշխատանքների հիմնական ձևը գյուղում, նպաստում են աշակերտների հարցասիրության և հնարամտության զարգացմանը, ապահովում են դպրոցի իրական մասնակցությունը բերքի բարձրացման, նոր կուլտուրաների ընտրության և առաջ չարժման

մեջ, ինչպես նաև անասնաբուծության արդյունավետությունը բարձրացնելու մեջ:

Գարնանային և ամառային փորձնական աշխատանքները պլանավորված են յուրաքանչյուր դասարանում տարեկան 10 ժամվա հաշվին, վորոնք տարվում են իհաշիվ դպրոցի հասարակական աշխատանքների ժամերի: Գյուղատնտեսության դասատուն այս դեպքում վարձատրվում ե նույն չափով, ինչ չափով վարձատրվում են տեսական պարապմունքների դեկավարները:

ԾՐԱԳԻՐ

Հիմնգեոդզ դասաբան

1. ՀՈՂԸ, ՆՐԱ ՄՇԱԿՈՒՄԸ ՅԵՎ ՊԱՐԱՐՏԱՅՈՒՄԸ

(5 ժամ, վորից 2-ը տեսական, 3-ը՝ լաբորատոր)

Հողի դերը բույսերի աճման գործում:

Հասկացողություն հողի մասին: Հողի բաղադրիչ մասերը և նրա ֆիզիկական հատկությունները: Հողի կազմության նշանակությունն աճման գործոնները կարգավորելու նկատմամբ:

Հողի մշակումը վորպես բույսեր աճեցնելու ավելի բարենպաստ պայմաններ ստեղծելու միջոց՝ (խոնավության կուտակում և պահպանում, սննդատու նյութերի կուտակում, մուլախոտերի և վնասատուների վոչնչացում):

Հողը մշակելու յեղանակները. վարելը, ցաքանելը, կուլտիվացիան:

Հասկացողություն կուլտուրական վարի մասին և նրա նշանակությունը: Մշակման գործիքները, աշխատանքի պրոցեսը: Գործիքները բանեցնելու ագրոտեխնիկական պահանջները:

Հողի պարարտացումը: Պարարտացման նշանակությունը՝ բերքատվությունը բարձրացնելու համար:

Պարարտանյութերի տեսակները և նրանց գործադրումը:

1) Վորոչել հողի ֆիզիկական հատկությունները (կազմությունը, խոնավության տարողությունը, ջրաթափանցությունը, մազականությունը):

2) Ցանոթություն պարարտանյութերին. դրանց վորոչելը արտաքին տեսքից:

3) Ցանոթություն մշակող գործիքների կառուցվածքին:

2. ԲԱՆՋԱՐԵՂԵՆՆԵՐ ՅԵՎ ՆՐԱՆՅ ԱՃԵՑՆԵԼԸ

(12 ժամ, վորից տեսական պարապմունքներին 6 ժ., լաբորատոր—3 ժ., հասար. արտադր.—3 ժ.):

Բանջարաբուծության նշանակությունը: Խոնավության և ուղի տարրեր աղբեցությունն առանձին բանջարեղենների վրա: Սննդանյութերի պահանջը:

Ջերմոցների նշանակությունը. ընդհանուր հասկացողություն: Տաք և ցուրտ ջերմոցներ. նրանց նպատակը: Գոմաղբը. գոմաղբ պատրաստելը: Ջերմոցային հող, նրա պատրաստելը: Ջերմոց հիմնելը: Բանջարեղեն ցանելը և աճեցնելը: Ջերմություն, խոնավության և լույսի կանոնավորումը: Պայքար վնասատուների դեմ: Սածիլանոց կառուցելը և սածիլներ աճեցնելը:

Բանջարեղեններ մշակելը, ցանելը և տնկելը, խնամքը, պայքար մուլախոտերի և վնասատուների դեմ, բերքահավաք:

Սերմավորությունը բանջարանոցի հողամասում: Բանջարանոցային միամյա բույսերի սերմեր ստանալու յեղանակները:

Լաբորատոր աշխատանքներ.

1. Ճանաչել բանջարեղենների սերմերն ըստ արտաքին տեսքի:

2. Վորոչել սերմերի ծլունակությունը (աճեցնելու սկզբնական աշխատանքները):

3. Ծանոթանալ ցանող և տնկող մեքենաներին (եքսկուրսիա):

4. Ճանաչել բանջարեղենների գլխավոր վնասատուները:

5. Ճանաչել բանջարեղենների ծիլերը:

Հասարակական արտադրական աշխատանք: Հասարակական արտադրական աշխատանքների պլանով անհրաժեշտ և անցկացնել հետևյալ գործնական վարժությունները:

1. Ջերմոց և սածիլանոց հիմնելը: 2. Սածիլի սերմեր ցանելը: 3. Նախասածիլումը: 4. Սածիլներ հանելը: 5. Խնամք, նոսրացում, քաղհան և փխրացում. ջրելը:

3. ՊՏՈՒՂՆԵՐԻ ՅԵՎ ՀԱՏԱՊՏՈՒՂՆԵՐԻ ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐ ԱՃԵՑՆԵԼՈՒ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(8 ժամ, վորից 2 ժամ տեսական, 3 ժամ լաբորատոր գործնական և 3 ժամ հասարակական-արտադրական)

Պաղարկութեան նշանակութիւնը: Շուտ հասնող հատա-
պտուղների (առանձնապէս մորի) անհրաժեշտութիւնը:

Բազմացնելու յեղանակները: Վեգետատիվ բազմացման յե-
ղանակները. տնկաչիւր, անդալիսներ, արմատաչիւր, պատվաստ-
ներ: Վեգետատիվ բազմացվող պտղա-արմատապտուղների բույ-
սերի տեսակները:

Պատվաստը վորպէս պտուղների կուլտուրաների բազմացման
հիմնական յեղանակ: Պաղատնկարան, նրա կազմակերպումը և
հիմնական աշխատանքները. սունկեր աճեցնելը, պատվաստելը,
պատվաստների և միամյա սունկերի խնամքը. ընդհանուր ծանո-
թութիւն:

Պաղատու ծառերն աչիւր վորպէս պտուղները—հողը պատրաստելը,
տնկելը, պտղատու ծառերի խնամքն աչիւր. սաղարթի ձևալո-
րումը: Հողը խնամելը, պայքար վնասատուների դեմ: Հատա-
պտուղային բույսերը խնամելու առանձնահատկութիւնները:

Նոր տեսակներ ստանալը: Միջուրինի աշխատանքների նշա-
նակութիւնը նոր տեսակի պտուղներ և հատապտուղներ ստանա-
լու ուղղութիւնը: Արհեստական խաչասերումը, վորպէս նոր տե-
սակի բույսեր ստանալու ամենի լավ միջոց:

Լաբորատոր գործնական աշխատանքներ. 1) հաղարջի ճյու-
ղեր կտրելը, տնկելու համար պատրաստելը. 2) պատվաստելու
աշխատանքներ:

Հասարակական արտադրական աշխատանք: 1) տնկարանի
հիմք դնելը. 2) հաղարջի, մորի արմատ տնկելը և խնամելը.
3) տնկարանը խնամելը. 4) աչիւր խնամելը—չորուկներ կտրե-
լը, ծառերի բնիկներ կրծուր քսելը, սրակելը, բնի փոս տեղերը
լցնելը. 5) տնկիների պատվաստումը (ամառը):

4. ԲՆԱՓԱՅՑ ՅԵՎ ՄԵՏԱՂ, ՆՐԱՆՅ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄՇԱԿՈՒՄԸ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՅԵՎ ԱՄԱՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՆՎԵՆՏԱՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼԸ (8 ժամ)

Փայտի և մետաղի աշխատանքների համար աշակերտներից
խմբակներ և յենթախմբակներ կազմելը և դասավորելն ըստ աշ-
խատանքային տեղերի, պարտականութիւնների բաշխումը. աշ-
խատելու հիմնական կանոններն արհեստանոցում:

Ինվենտար պատրաստելու համար գործադրվող նյութերը:

Փափուկ պողպատ («յերկաթ») ձողաձև, շերտաձև, թերթաձև:

Բնափայտ, տախտակ: Դրանց մշակելու յեղանակը:

Բնափայտը սղոցելը և ռանդելը. գործիքները, նիշնչելը, ո-
պերացիաներ կատարելու տեխնիկան, ճշտութիւնն ստուգելը:

Մետաղը հատելը և խարտոցելը. գործիքները, նիշնչելը,
ոպերացիան կատարելու տեխնիկան, ճշտութիւնն ստուգելը:

Փայտ և մետաղը ծակելը. ծակելու գործիքները գործադրե-
լու հիմնական յեղանակները, ծակելու համար նիշնչելը և կե-
տելը:

Բարակ մետաղը ծակհարով ծակելը: Իրեր պատրաստելը
(սղոցելու, ռանդելու, հատելու և խարտոցելու ոպերացիաները
գործադրելով). բահի, փոցի, բրիչի կոթեր. սածիլների, ծա-
ղիկների արկղ, պատգարակ և այլն: Բահի, բրիչ կտրող մասերը,
խարտոցով սրելը:

5. ԱՄԱՌԱՅԻՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏ- ՐԱՍՏՎԵԼԸ. ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ ԿԱԶՄԵԼԸ (3 ժամ)

Ամառային աշխատանքների պլան կազմելը:

Փորձնական աշխատանքների բովանդակութիւնը:

Աշխատանքի որոշումներ. տոմատ, կաղամբ, կարտոֆիլ, ճա-
կընդեղ, մորի, հաղարջ, ծաղիկներ:

Աշխատանքի ծախսը. յուրաքանչյուր աշակերտ պարտա-
վոր է աճեցնել 12 պամաղոր և 2 թուփ (մորի կամ հաղարջ) և
այլն:

Փորձեր դնելը, խնամքը, դիտողութիւններն ու հաշվառումն
անց են կացվում ի հաշիվ հասարակական արտադրական աշխա-
տանքի ժամանակի լրջուլէյի:

Փորձնական աշխատանքները ղեկավարում է բնագիտութիւն
դասատուն (վարձատրվում է նույն հիմունքներով, ինչ հիմունք-
ներով վարձատրվում են տեսական առարկաների դասատուները):

6. ԱՆՑԱԾԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Վեցերորդ դասաւան

1. ԱՄԱՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (1 ժամ)

Վողջ դասարանի աշխատանքների արդյունքների ամփոփու-
մը: Պատրաստվել ցուցահանդեսին:

(23 ժամ, վորից լաբորատորական աշխատանքներին 6 ժամ՝ հասարակ. աշխ. 6 ժամ)

Ա. Աշխատանքների կուլտուրաներ անցնելը

(6 ժամ, վորից լաբորատոր գործնական 3 ժամ)

Աշխատանքների կուլտուրաներ մշակելը (ցորեն)։ Դաշտն աշխատանքների համար պատրաստելը։ Մաքուր և զբաղեցրած ցելեր։ Մշակումը, ժամկետները, խորութիւնը։ Մշակող գործիքներ։ Գութանը տեղակայելու կանոնները։ Պարարտանյութ դաշտ փոխադրելը։

Սերմը պատրաստելը։ Ցանելու նյութերին առաջադրվող պահանջները. մաքրութիւնը, ծլունակութիւնը, քաշը, խոշորութիւնը, վարակված չլինելը։ Սերմի մաքրութիւնը նշանակութիւնը բերքատուութիւնը բարձրացնելու տեսակետից։

Ախտահանումը վորպես միջոց վարակման դեմ։

Սերմադրոյի մեքենաներ (քամհար, տեսակաւորող, տրիյեր), նրանց աշխատելու սկզբունքները։ Տեսակաւորող մեքենայի բանող հիմնական մասերն ըստ սերմերի քաշի և յերկարութիւնի։

Աշխատանքների կուլտուրաները, ցանելու ժամանակը և ժամկետները։

Սերմացվի նորմաները և հատիկը հողի մեջ ինչ խորութիւնով ցանելը։ Շարքացան մեքենաներ, աշխատանքի պրոցեսը, բանող մասերը, ցանող ապարատ, խոփեր։ Ցանող ապարատն ըստ տըրված նորմայի տեղակայելու հաշիվ։

Աշխատանքների կուլտուրաների խնամքը։ Ցաքանելը։ Պայքար մոլախոտերի դեմ։

Հասունանալը, հալաքելու ժամանակը և պրոցեսը։ Պայքար կորուստների դեմ։ Ընդհանուր հասկացողութիւնը հնձող մեքենայի մասին, կորող ապարատի կազմութիւնը, փոցխող ապարատի աշխատանքն ու նշանակութիւնը։ Ընդհանուր հասկացողութիւնը խրճկապ ապարատի մասին։ Կոմբայնի աշխատանքի պրոցեսը։

Լաբորատոր գործնական աշխատանքներ.

1. Սերմերի բացարձակ քաշը և մաքրութիւնը սահմանելը։
2. Սերմադրոյի մեքենաների կազմութիւնն ուսումնասիրելը (տեսակաւորող տրիւմֆ և տրիյեր). բանեցնելու համար տեղակա-

յելը, կարգաւորելը։ 3. Շարքացան մեքենայի գործնական ուսումնասիրութիւնը։ Ցանող ապարատի տեղակայումը՝ տըրված նորման ցանելու համար։

Ծանոթութիւն.— Լաբորատոր, գործնական աշխատանքներն ապահովելու նպատակով անհրաժեշտ է վաղորդ արկըղներում ցանել դանազան տեսակի սերմեր—ծիլեր ստանալու համար։

Բ. Գարնանացանի կուլտուրաներ անցնելը

(6 ժամ, վորից լաբորատոր գործնական 2 ժամ)

Բամբակ աճեցնելը (վոչ բամբակացան շրջաններում՝ ցորեն վրա դարի)։ Հողը դարնանացանի կուլտուրաների համար պատրաստելը։ Վաղ ցելի նշանակութիւնը։ Սերմացուն պատրաստելը։ Բամբակը ցանելու ժամանակը և ժամկետները։

Գարնանացանի հացահատիկները ցանելու ժամանակը և ժամկետները։ Ուղղողի ալիքները բաց անելու, կտրելու ժամանակը և ժամկետները։ Գերվաղ ցանքը և նրա նշանակութիւնը։ Պայքար մոլախոտերի, վնասատուների և հիվանդութիւնների դեմ։ Հացահատիկների հալաքը։

Արմատապտուղները մշակելու առանձնահատկութիւնները. հողը պատրաստելու և պարարտացնելու աշխատանքները։ Արմատապտուղները ցանելու և տնկելու ժամանակը։ Արմատապտուղները հալաքելու ժամանակը։ Բամբակը քաղհանելու և ջրելու ժամկետները. բամբակի հալաքը։

Թիթենիներ լազմացնելը և մշակելը։ Թիթենու տերևները վորպես շերամի սնունդ։

Լաբորատոր աշխատանքներ.

Ծանոթութիւն դարնանացանի հացահատիկների և բամբակի սերմերի լավ տեսակներին։

Ցանել և տնկել բամբակի, ցորենի կոլեկցիաներ փորձադաշտում։

Գ. Խոտ անցնելը

(5 ժամ, վորից 2 ժամ լաբորատոր գործնական աշխատանքներին)

Բազմամյա խոտերի մշակումը—առաւելյո (յոնջա) կամ յերեքնուկ։ Խոտերի դերը ցանքաշրջանառութիւն ժամանակ. ցա-

նելու պայմանները: Յանաժ խոտերի խնամքը, խոտհնձի ժամա-
նակը: Խոտհնձի մեքենայացում: Խոտհար մեքենա, նրա կազ-
մությունը և աշխատանքը: Խոտհար մեքենայի աշխատանքը կար-
գավորելը: Խոտը չորացնելը: Մարգագետինները խնամելը. ընդ-
հանուր ծանոթություն:

Լաբորատոր աշխատանքներ. 1. Գործնական ծանոթություն
խոտհար մեքենայի կառուցվածքին: Կտրող ապարատի կցումը և
անջատումը: Ծանոթություն խոտերի տեսակներին: Կազմել կոլ-
եկցիա և հերթարկում:

Դ. Հասկացողություն ցանքաշրջանառության մասին (2 ժամ)

Հասկացողություն ցանքաշրջանառության մասին՝ չրջանի
տիպիկ ցանքաշրջանառության որինակի վրա:

Կուլտուրաների հերթափոխության նշանակությունը: Յանք-
սաշրջանառության կախումը պլանային առաջադրությունից:

Աշխատանքի կազմակերպումը դաշտավարական գործում.
որիզադը վորպես արտադրական հիմնական բջիջ: Բրիգադը կազ-
մակերպելու սկզբունքը, կազմը. հողամասի, քաչող ուժի, մե-
քենաների ու գործիչների ամրացումը բրիգադներին: Կոլտնտե-
սականների աշխատանքների վարձատրումն աշխուրհով:

3. ԲՆԱՓԱՅՏԸ ՅԵՎ ՄԵՏԱՂԸ, ՆՐԱՆՅ ԿԻՐԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄՇԱԿՈՒՄԸ (8 ժամ)

Ծառերի տեսակները և բնափայտի հատկությունները—սոճի,
հաճարի, ընկուզենի, կաղնի, հացենի. արտաքին տեսքից նրանց
ճանաչելը: Դիմացկանությունը, ամրությունը:

Մետաղների տեսակները և նրանց հատկությունները. չու-
գուն, կարծր և փափուկ պողպատ: Կարծրությունը, առաձգակա-
նությունը:

Դետալների միացումը կես փայտով: Ոպերացիաներ կատա-
րելու տեխնիկան: Արտաքին և ներքին աղոսներ հանելը: Սան-
դուխը զանազան կանգնակներ (сто́йка), հեղույսներ գյուղատուն-
տեսական ինյինտարի համար, սղոցների չափրաստում՝ փոփո-
խական մատով, գերանդին ամրացնելու ող, դույլ, ջրցիլներ,
լապտերներ:

4. ԱՄԱՌԱՅԻՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գարնանային—ամառային հասարակական—արտադրական աշ-
խատանքի նախապատրաստումը և պլան կազմելը:

Ամառային աշխատանքի պլան կազմելը՝ դաշտային կուլտու-
րաների վերաբերյալ փորձեր կատարելու, արմատապտուղներ
աճեցնելու և կոլեկցիոն ցանքեր կազմակերպելու գծով:

Հասարակական արտադրական աշխատանքի բովանդակու-
թյունը և որբեկտները: 1) Հացահատիկներ, արմատապտուղներ,
կերի խոտեր և տեխնիկական կուլտուրաներ՝ բամբակ և այլն.
2) կոլեկցիոն ցանքեր՝ ցեղերի և չրջանի պլանային ցանքաշր-
ջանառության կոլեկցիաներ, բամբակի և հացահատիկների պլա-
նային տեսակների, արմատապտուղների, յուղատու կուլտուրա-
ների և խոտի կոլեկցիաներ, նոր կուլտուրաների կոլեկցիաներ.
3) բանջարեղեններ ցանելը—ճակնդեղ, դադար, պամիդոր, կա-
ղամբ:

Աչակերտների ողակն անց ե կացնում մեկ փորձ 100—150 մ.
հողամասի վրա: Յուրաքանչյուր աչակերտ՝

ա)՝ աշխատանքն սկսում և դիտում ե կոլեկցիոն ցանքի հո-
ղամասից 5 մ-ի վրա. (բ) 5 սերմ ե աճեցնում:

5. ԱՆՅԱԾԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Յոթերորդ գլուխակ

1. ԱՄԱՌՎԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ (1 ժամ)

Ամառվա փորձերի արդյունքների մշակումը: Դասարանի աշ-
խատանքների ամփոփումը: Երապոնատների սարումը (մոնտաժ):

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ԽՆԱՄԵԼԸ

(4 ժամ, վորից 2 ժամ եքսկուրսիա)

Անասնաբուծության խնդիրները յերկրորդ հնգամյակում: Ա-
նասնաբուծության արդյունավետությունը բարձրացնելու ուղի-
ները: Յեղային անասունների նշանակությունը, մետիզացիա
(աղնվացեղում), կերի բազա, խնամքը և վանոնավոր պահելը:
Կոլտնտեսական և խորհրդատեսական ապրանքային ֆերմաները և
նրանց դերը անասնաբուծության բարձրացման գործում: Կոլտն-

տեսակաների անհատական ոժանդակ անասնաբուժության զարգացումը:

Անասունները կանոնավոր պահելու հիմունքները: Ձոռհիդի-
ենայի դերն անասնաբուժությունը զարգացնելու գործում: Պա-
հելու և խնամելու ազդեցությունն անասունների արդյունավե-
տություն և առողջություն վրա:

Անասնաբաղի հիմնական մասերը. բաժանմունք կաթնատու
անասունների համար, արտադրողների, մատղաշի և կերի բա-
ժանմունք: Անասնաբաղի սարքավորումը. հատակի, նավի, կե-
րակրամանների կառուցվածքը: Ուղարկություն:

Կենդանիները խնամելը, նրանց մաքրելը: խոզանակի և քե-
րոցի նշանակությունը: Փոռ: Վերջավորությունները խնամե-
լը, սմբակները կտրելը, յեղջուրները մաքրելը: Ստինքները
(կրծի) խնամելը:

Հիվանդությունների դեմ նախազգուշական միջոցների ան-
հրաժեշտությունը, անասնաբուժական հակողությունը:

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ ԿԵՐԱԿՐԵԼԸ ՅԵՎ ՄԱՏՂԱՇԸ ԽՆԱՄԵԼԸ

(7 ժամ, վորից 3 ժամ լաբորատոր գործնական)

Կերերի տեսակները. բուսական, կենդանական և խտացրած:
Բուսական կերերի տեսակները—կուլիտ, հյութալի, խտացրած:
Կերերի առանձին տեսակների ազդեցությունը մոտություն և
կաթնատվության վրա: Կերերի գործնական արժեքավորումը կե-
րի միավորներով:

Կաթնատու անասունների կերաբաժին սահմանելը: Կենդանի
քաշը և արդյունավետությունը վորոշելը, պահելը, պարարտու-
թյան և հղիության պայմանների պահպանումը: Կերաբաժին (կե-
րի միավորներով) և յեղած կերերից ռացիոն կազմելը, կերը
պատրաստելը, կերակրելը:

Բուծումը և ազնվացեղության նշանակությունը:

Մատղաշի աճեցումը: Հորթերը կերակրելու կարգը. կաթի
կերակրից մյուս կերերին անցնելը:

Հորթարան, նրա խնամելը և կաղմակերպելը: խոզերը կերա-
կրելու և խնամելու առանձնահատկությունները:

Լաբորատոր գործնական աշխատանքներ. 1) խոտի, դարու,

կորնզանի, քուսպի կերային ոգտավետություն արժեքավորումը:
2) Կենդանի քաշի վորոշումը—չափելով: 3) Կաթնատու անասու-
նի կերի ռացիոնը վորոշելը: 4) Կերը պատրաստելու մեքենանե-
րին և ապարատներային ծանոթանալը:

4. ԱՇԽԱՏՈՂ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ԽՆԱՄԵԼՈՒ ՅԵՎ ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ՍՈՒՆԱՋՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(3 ժամ, վորից 1 ժամ լաբորատոր գործնական)

Յեղները խնամելը, կերակրելը և պահելը: Յեղները կերա-
կրելու, ջրելու և մաքրելու պայմանները: Յեղների աշխատանք-
ները զուգարհանությունյան մեջ: Յեղները լծելու կանոնավոր յե-
ղանակը. լծի և սամիների ընտրությունը:

ՀԱՍՍՐԱԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Կովերին նորմաներով վորձնական—ցուցադրական կեր
տալը, դրսևորելով կերակրելու ազդեցությունն անասունի ար-
դյունավետության մեջ:

Կերակրումը շարունակվում է հետևյալ ժամանակաշրջանե-
րը—նախապատրաստական, անցման և յեղրափակման, հատկա-
պես վորձնական: Յուրաքանչյուր կովին կցվում է 6 աշակերտ
կերակրելու համար: Կերակրման արդյունքները մշակվում և ամ-
փովվում են:

5. ԿԱԹԻ ՅԵՎ ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ

(11 ժամ, վորից 5 ժամ լաբորատոր—գործնական)

1. Կաթի առաջացումը: Կթելու կանոնները և կուրծի խնամ-
քը: Կաթի վորակը վորոշելը: Հասկացողություն կաթի արատ-
ների մասին: 2. Կաթը խնամելու յեղանակը—քամելը, սառեցնե-
լը, պատյորացնելը: 3. Կաթի վերամշակումը, սերղատելը:
Յուղ հարելը և նրա հետագա մշակումը (ընդհանուր հասկացո-
ղություն). մածուն պատրաստելը, թան. բակտերիաների նշա-
նակությունը:

Լաբորատոր գործնական աշխատանքներ. 1) կաթի տեսակա-
բար կշռի, կեղտոտություն և թթվածություն (ըստ Տեղների) վո-

բողոքով. 2) յուզի տոկոսը վորոշելն ըստ Հերբերի. 3) սերգատի գործնական ուսումնասիրութիւնը. թմբուկը քանդելը և կարգաւորելը: Աշխատանք սերգատով:

Վոչ լրիվ միջնակարգ դպրոցում «Կաթի և կաթնամթերքների վերամշակումը» թեմայի փոխարեն մշակվում է «Տրակտորը, նրա կազմութիւնը և աշխատանքը» թեման:

ՏՐԱԿՏՈՐԸ, ՆՐԱ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ

(11 ժամ, վորից 5 ժամ եքսկուրսիա)

Տրակտորի շարժիչը. ներքին այրման շարժիչի գործադրութիւնն արդյունաբերութեան և դյուղատնտեսութեան մեջ: Տրակտորի նշանակութիւնը:

Տրակտորի գլխավոր մասերը և նրանց նշանակութիւնը. մոտոր՝ փոխանցման մաս, լրացուցիչ մեխանիզմներ:

Մոտորի հիմնական մասերը. գլան, մխոցային խումբ, կոթածող, կարտեր, ծնկաձև հոլան, թափանիվ: Մոտորի աշխատանքի պրոցեսը, մոտորի տակերը, մխոցի շարժումը:

Գաղաբաշխումը. ներծծող և դուրս մղող կախարիչի նշանակութիւնը: Բաշխիչ հոլան, բռունցքների և բոթիչի նշանակութիւնը: Ուժի փոխանցումը ծնկաձև հոլանից բաշխիչ հոլանին:

Շարժիչի համար պահանջվող վառելանյութը. բենզին և նավթ. կարբուրատոր. նրա նշանակութիւնը և կազմութիւնը (բնդհանուր ծանոթութիւն): Նորմալ խառնուրդ: Հասկացողութիւն հարուստ և աղքատ խառնուրդների մասին:

Վառելը: Մագնետոյի, լարերի և բռնկող մոմի նշանակութիւնը: Կպցնելու կարգը:

Շարժիչի սառեցումը. սառեցնելու անհրաժեշտութիւնը: Ռադիատորի, վենտիլատորի կառուցվածքը:

Շարժիչը յուղելը. ճնշման տակ և ցայելով յուղելու յեղանակը:

Տրակտորի փոխանցման մեխանիզմը: Շղթայացման կցորդիչը, արագութեան արկղը, փոխանցումը, դիֆերենցիալը. ընդհանուր հասկացողութիւն նրանց նշանակութեան, կազմութեան և գործողութեան մասին:

Տրակտորի ընթանալու կառուցվածքը: Անիվավոր և թրթուռային տրակտորներ: Լծակների և դեկի դերը:

Տրակտորի մասերի փոխադրեցութիւնը:

Տրակտորի լուսավորութեան ցանցը. (մշակվում է, յետքեր տրակտորն ելեկտրասարքավորում ունի): Տրակտորի ելեկտրական լուսավորութեան շղթան, հոսանքի գեներատորը: Լուսավորութեան ցանցի լարերը, անցկացումը դեպի լամպաները: Հոսանքը միացնել և անջատելը:

Եքսկուրսիա:

1. Տրակտորը աշխատանքի դնել. պատրաստել վառելիքը. ռադիատորը ջուր լցնել և յուղել:

2. Շարժիչը քանի դցել, կարբուրատորը կանոնավորել և վառել: Դիտել շարժիչի աշխատելու բնույթին, յուղելուն և սառեցնելուն:

6. ԲՆԱՓԱՅՏ ՅԵՎ ՄԵՏԱՂ, ՆՐԱՆՅ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄՇԱԿՈՒՄԸ

(Գարնանային-ամառային դյուղատնտեսական աշխատանքների ինվենտարը նախապատրաստելը — 18 ժամ)


Բնակայտի ամենատարածված արատները, վոստոգոտութիւն, կապտավուն գուլն ստանալը, փթելը, մանրաթելերի անկանոն դասավորութիւնը:

Հասկացողութիւն գործիքային պողպատի մասին, ածխածնային և հատուկ պողպատի մասին:

Փայտի մշակումն ուրագով, կտրելը, տաշելը, սրելը: Դարբնոցային հասարակ ոպերացիաներ. ծալել, ձգել, ծակել: Ոպերացիաները կատարելու տեխնիկան:

Բանվածքներ. կեռեր, փոցի մասներ, դյուղատնտեսական մեքենաների, սայլերի մասեր, բահի կոթեր, ջերմոցների չրջանակներ, քամհարի մաղերի չրջանակներ, անտանաբակի համար մանր սարքավորում:

Եքսկուրսիա դեպի վերանորոգման արհեստանոց կամ գործարան՝ փայտի և մետաղի մեքենայական մշակմանը ծանոթանալու համար:



Ուրբեռոգ դասարան

1. ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏԸՆ՝
ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՁ

(7 ժամ, վորից 4-ը լաբորատոր գործնական)

Հողի կադմուկյունը. նրա հիմնական բաղադրիչ մասերը:

Զրի, ուղի, սննդի և ջերմության ռեժիմը հողի նկատմամբ: Բիոլոգիական գործողությունները: Հողի ջուր կլանելու ընդունակությունը. դրա նշանակությունը բույսի սննդառության գործում: Հողային լուծույթ. հողային լուծույթի ռեակցիայի ազդեցությունը բույսի դարձացման վրա: Բույսի սննդառության տարրերը և բույսերի առանձին պահանջը սննդանյութերի նկատմամբ:

Հողի պարարտացումը վորպես բերքատվությունը բարձրացնելու միջոց:

Պարարտանյութերի տեսակները: Որգանական պարարտանյութեր. գոմաղբ, տորֆ, կոմպոստ, կանաչ պարարտացում. սրանց ազդեցությունը հողի և բույսերի վրա: Մանրանյութերի տոկոսային բաղադրությունը: Գոմաղբ, տորֆ և կոմպոստ պատրաստելու յեղանակները: Պարարտանյութերի ազդեցությունը զանազան կուլտուրաների վրա: Կանաչ պարարտացում ստանալը. գործադրման պայմանները, ոգտագործումը:

Հանքային պարարտանյութեր: ԽՍՀՄ-ի արդյունաբերությունում մշակվող հանքային հասարակ պարարտանյութերի հիմնական ներկայացուցիչները, նրանց բնութագրումը, գործադրությունը: Համակցված հանքային պարարտանյութեր WPR -ի կապակցությամբ՝ տգտագործման նորմաները:

Մոխիր պահելու և գործադրելու յեղանակը: Կրային հողեր: Հացահատիկային, տեխնիկական, բանջարանոցային բույսերի և կերի խոտերի պահանջը սննդանյութերի նկատմամբ:

Պարարտանյութերը ցրելու նորմաները և ժամանակը: Հասկացողություն պարարտացման սխեմի մասին:

Լաբորատոր գործնական աշխատանքները. 1. հողի կլանողական ընդունակությունը և ջրառության ռեժիմը: 2. հողի թթվու-

թյունը վորոշելը. կիր ալկալացնելու անհրաժեշտությունը վորոշելը: 3. Ցանքաշրջանառություն սխեմի մասին պարարտանյութեր մտցնելու պլան կազմելը:

2. ՀՈՂԸ ՄՇԱԿԵԼՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ՅԵՎ ՅԱՆՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

(17 ժամ, վորից 5-ը լաբորատոր գործնական, 4-ը հասարակական-արտադրական)

Ա. Հիմնական հասկացողություններ գյուղատնտեսական մեքենաշինարարության նյութերի, մեքենաների և մեխանիզմների մասին (5 ժամ)

Հասկացողություն մեքենաների մասին: Մեքենայի յերեք հիմնական մասերը: Հասկացողություն մեքենա-գործիքի և մեքենա-չարժիչի մասին: Գյուղատնտեսական մեքենաների կառուցվածքի առանձնահատկությունները՝ աշխատանքի պայմանների կապակցությամբ: Գյուղատնտեսական մեքենաների կլասիֆիկացիան ըստ արտադրական պրոցեսների:

Գյուղատնտեսական մեքենաներում ալկելի տարածված հիմնական մեխանիզմները՝ շարժումը ղուգահեռ գլանների միջև և անկյունով փոխանցելու համար, շարժումի մեկ տեսակը մյուս տեսակի վերածելու փոխանցումներ:

Փոխանցումը ղուգահեռ գլանների միջև, փոկային և պարանային փոխանցում: Տանող և տարվող ճախրանիվներ, փոխանցման թիվը: Ատամնալոր փոխանցում, փոխանցման թիվը: Ատամներով միացում, փոխանցման թվի վորոշումը:

Փոխանցումն անկյունով և խաչաձև գլանների միջև: Կոնային ժանանիվ: Փոխանցում Գուկի հոգակապով (шарнир): Վորդենային փոխանցում, ստուտակի քայլը: Ֆրիկցիոն փոխանցում, գործադրությունը:

Շարժման մեկ տեսակը մյուս տեսակի վերադադրող փոխանցում: Քառոդակային մեխանիզմ և նրա ձևափոխությունները: Շուրտվիկ կոթածողային մեխանիզմ: Արտակենտրոնակ և կեռեր, արդելանիվ: Չողային փոխանցում և նրա գործադրությունը. հասկացողություն մեքենաների գլխավոր գետակների մասին. անիվներ, նրանց հիմնական մասերը: Առանցքներ և

գլխներ: Շրջակներ և ագուլներ: Առանցքակալներ—սահող, զնդիրկային, գլանային: Յուղելը, յուղելու հարմարանքները: Ճախրանիվները: Հեղյուսներ, փայտապտուտակներ, յերկթներ, ձուլիկներ, տափողակներ, նրանց գործադրութիւնը:

Բ. Հողը մշակելու գործիքները
(4 ժամ, վորից 2-ը լաբորատոր գործնական)

Հողը մշակելու խնդիրները: Հողը մշակող գործիքների նշանակութիւնը և ագրոտեխնիկայի կողմից հողը մշակող գործիքների նկատմամբ առաջադրվող պահանջները: Գութանները և դրանց կազմութիւնը: Գութանի բանող մասերը: Գութանի իրանը վորպէս բարդ սեպ: Լրացուցիչ բանող մասերը. նախախոփ, խորացնող մաս: Տրակտորային գութանների լծակները և ավտոմատները, նրանց գործողութիւնի սխեման:

Գութանը տեղակայելը: Գութանի վրա ներգործող ուժերը և նրանց փոխարարներութիւնը: Գութանի ծանրութիւն կենտրոնի նշանակութիւնը գութանը տեղակայելու համար. ծանրութիւն կենտրոնը վորոշելը:

Ծանրութիւն կենտրոնի ուղղութիւնը գութանին կցում ա-նելը:

Գութանի աշխատանքը: Հողի դիմադրութիւն գործակիցը: Գութանը խնամելը:

Ցաքաններ. նրանց կառուցվածքը՝ կուլտիվատորներ:

ՄՏԿ-ներում, խորհտնտեսութիւններում գործադրվող հող մշակող գործիքների հիմնական տեսակները, նրանց գործադրուման պայմանները, արտադրողականութիւնը:

Լաբորատոր գործնական աշխատանքներ. 1) գութանի ծանրութիւն կենտրոնը վորոշելը. 2) ավտոմատի աշխատանքին մանրադին ծանոթանալը. 3) գութանը տեղակայելը, ստուգելը և կարգաւորելը:

ՍԵՐՄԸ ՑԱՆԵԼՈՒ ՅԵՎ ՀՈՂԸ ՊԱՐԱՐՏԱՅՆԵԼՈՒ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

(4 ժամ, վորից 2-ը լաբորատոր գործնական)

Սերմերի աճման և բույսերի զարգացման հիմնական պայմանները: Ագրոտեխնիկական պահանջները ցանոց մեքենաների նկատմամբ: Շարքացան մեքենաներ, դրանց կառուցվածքի ա-

ռանձնահատկութիւնները՝ ցանոց մեքենաների ցանոց ապարա-տը. շարքացանների հաղորդիչ մեխանիզմները: Շարքացանի ավ-տոմատը և նրա աշխատանքը:

Տրակտորի կցորդը: Տրակտորի նկատմամբ պահանջվող հո-րութիւնը: Շարքացանով աշխատելու կանոնները: Հանքային պարարտանյութերը ցրելու համար գործադրվող շարքացանի կա-ռուցվածքը:

Լաբորատոր գործնական աշխատանքներ. 1) շարքացանը տեղակայել ըստ առաջադրված նորմայի. 2) ստուգել խոփի ձիշտ դրվածքը, առաջի անիվների տեղակայելը:

ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Գործնական վարժութիւններ. 1) յեղան գութանով վարելը. 2) աշխատանք ձիու շարքացանով, ձեռք մաքրելը, ցանոց ապար-րատը և խոփը դիտելը:

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ
(10 ժամ, վորից 5 ժամ Երկուրսիա ՄՏԿ)

Հողը մշակելու և սերմեր ցանելու մեքենաները (գութան, ցաքան, շարքացան) քանդելը, սարվածութիւնն ստուգելը, վե-րանորոգումը և սարումը:

Դետալները պատրաստելու համար անհրաժեշտ նյութերի ընտրութիւնը: Գծադրից ոգտվելը, դետալներ պատրաստելը:

Երկուրսիա դեպի ՄՏԿ-ի վերանորոգման արհեստանոցը, հետևյալ թեմայի շուրջը՝ «տոկարի հաստոց»:

Հաստոցի կառուցվածքը: Հաստոցի գլխավոր մասերը—հե-նոց, առջևի տայլակ. յետևի տայլակ, յենթանցուկ, մատուց-ման մեխանիզմ:

Հիմնական աշխատանքների ցուցադրում տոկարի հաստոցի վրա:

Մասնակցութիւն գլուղատնտեսական մեքենաների և գոր-ծիքների վերանորոգման աշխատանքներին:

4. ԱՆՅԱԾ ՆՅՈՒԹԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ (2 ժամ)

ԻճԵՐՈՂ ՂԱՍԱՐԱՆ

1. ԱՄԱՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (1 ժամ)

Ամառային փորձնական աշխատանքների արդյունքների ամփոփումը: Յուզահանդեսի համար եքսպոնատների ընտրություն:

2. ՀԱՎԱՔՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐ (14 ժամ, փոքրից 3 ժամ լաբորատոր-գործնական)

Ա. Հնձող մեքենաներ

(6 ժամ, փոքրից 3-ը լաբորատոր գործնական)

Գյուղատնտեսական բույսերը հավաքելու աշխատանքների մեքենայացման նշանակությունը: Բերքահավաքը և պայքար կորուստների դեմ: Հավաքելու մեքենաները. (խրճկապ, կոմբայն և այլն): Դրանց արտադրողականության վերոշումը: Հնձող մեքենաների հիմնական հատկությունները: Կտրող ապարատի բանելու սխեման: Խրճկապ մեքենա: Ագրոտեխնիկական պահանջները խրճկապ մեքենայի աշխատանքների նկատմամբ: Ընդհանուր ծանոթություն կառուցվածքին և բանելուն: Խրճկապ մեքենայի լծակները և մեխանիզմները: Պայքար կորուստների դեմ: Արտադրողականության վերոշումը: Տրակտորային խոտհար մեքենայի առանձնահատկությունները՝ ձիաքարշ խոտհար մեքենայի համեմատությամբ:

Լաբորատոր գործնական աշխատանքները. 1) ծանոթություն խրճկապ մեքենայի կառուցվածքին. 2) հնձող մեքենայի կտրող ապարատի ստուգումը. մատների և դանակի շերտի դասավորությունը՝ շուրտվիկը զրոյի վրա լինելու դեպքում, 3) հնձող մեքենայի ղեկավարման լծակների գործողության ստուգումը, աշխատանքի գցելը, խորճի մեծությունը և կտրելու բարձրությունը կարգավորելը, փոխադրական մեջուցի վրա դնելը:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հասարակական-արտադրական աշխատանքների պլանում անհրաժեշտ է նախատեսել տրակտորային խոտհար մեքենայի վրա

աշակերանների ուսուցման կազմակերպումը (ամառային արձակուրդների ընթացքում):

Բ. Կալսիչներ

(5 ժամ, փոքրից 3-ը լաբորատոր-գործնական)

Հացահատիկը կալսելու պրոցեսը և կալսելու յեղանակները: Կալսելու մեքենայացման պրոցեսի զարգացումը, կալսիչ մեքենայի հիմնական մասերը (BDO 34 կամ MK 1100) բարդ կալսիչների որինակի վրա: Թմբուկը և դեկան, նրանց կառուցվածքը: Յերիթավոր և Բիլնի թմբուկներ, նրանց գործադրությունը: Դարմանը շարժող մասը—նշանակությունը: Քամհար: Հասկացողություն ամերիկական տիպի մեքենայացված կալսիչների մասին (AMP—710-ի որինակով): Աշխատանքի պրոցեսը և արտադրողականությունը:

Լաբորատոր աշխատանքները. 1) գործնական ծանոթություն կալսիչ մեքենայի կառուցվածքին: Թմբուկի ստուգումը, դարման շարժող մասի ստուգումը, մաղերի ընտրությունը, առանցքակալների ստուգումը, յուղելու քարտ կաղմելը: 3) Թմբուկի, դարմանաշարժիչի պտույտների թիվը վերոշելը. փոկերի աշխատանքի սխեման կաղմելը:

Գ. Կոմբայն (6 ժամ)

Կոմբայնով հավաքելու առավելությունները: Կոմբայնի հիմնական մասերը: Խեղեր, կալսիչ և շարժիչ: Խեղերի հիմնական մասերը. կարժառ (մոտովիլո), կարող ապարատ, պլատֆորմ, արանսպորտյերների յերեսներ, ելեվատորներ, հակակշիռ:

Կալսիչ, նրա հիմնական մասերը, թմբուկի ինքնամատուցյը, բիտեր, թմբուկը և դեկան, հատիկային տրանսպորտյեր, դարմանաշարժիչ, քամհարներ, հասկային և հատիկային ելեվատոր, շնիկ, բունկեր, բունկերը դատարկելը, մոլախոտային սերմերի առանձնացումը: Աշխատելու պրոցեսը, արտադրողականությունը. «Ստալինեց», «Կոմունալ» կոմբայնների գործադրման պայմանները, վինդրոուեր—նրա գործադրության պայմանները:

3. ՍԵԼԵԿՅՈՒՄՅԻ ՅԵՎ ՍԵՐՄԱՔՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ
(8 ժամ, վորից 2 ժամ լաբորատոր գործնական և 4 ժամ հասարակական-արտադրական)

Սելեկցիայի նշանակությունը բերքատվությունը բարձրացնելու տեսակետից: Սելեկցիոն աշխատանքների ուղղությունը և հիմնական խնդիրները կուսակցության գերեկտիվներին համաձայն յերկրորդ հնգամյակում:

Տեղական և սելեկցիոն տեսակներն ու նրանց բարելավումը: Սելեկցիոն տեսակները և նրանց նշանակությունը: Սկզբնական նյութի ընտրությունը սելեկցիոն աշխատանքի համար: Գյուղատնտեսական բույսերի տեսակներին առաջադրվող հիմնական պահանջները. առատ բերք և սննդային ու տեխնիկական բարձր հատկություններ, գիմացկունություն ցրտի և չորություն դեմ, իմունիտետ՝ հիվանդությունների դեմ, վաղ հասնելու ունակություն:

Արհեստական ընտրություն: Տեղական տեսակների բարելավում: Նոր տեսակներ ստանալն արհեստական խաչաձևման յեղանակով: Սելեկցիոն աշխատանք ինքնավոլյուրով և խաչաձև փոշնորվողների հետ. մեթոդիկա և տեխնիկա:

Յարավորագրի խոչոր նշանակությունը սելեկցիոն աշխատանքներում: Յարավորագրի գիտական հիմնավորումը. մեթոդիկան և տեխնիկան գյուղատնտեսական առանձին տեսակներին կատարմամբ:

Շրջանի գյուղատնտեսական կուլտուրաների հիմնական-պլանային առաջատար տեսակները. նրանց բնութագրումը: Ժամանակավորապես թույլատրվող գյուղատնտեսական բույսերի տեսակները:

Գյուղատնտեսական բույսերի տեսակների ստուգումը և խնդիրները: Տեսակներն ստուգելու մեթոդիկան:

Սերմերով ցանվող դաշտային կուլտուրաներ մշակելու ագրոտեխնիկայի առանձնահատկությունները: Տեսակային ցանքերը կուլտուրական բույսերի մյուս տեսակներով և մոլխոտերով աղտոտելու անթույլատրելիությունը. քերքը հավաքելու, կալսելու, մաքրելու և տեսակավոր սերմերը պահելու կանոնները:

Տեսակավոր ցանքի հսկողության վերստուգման հիմնական խնդիրները— վերստուգման կազմակերպումը. Հավանություն

տալու տեխնիկան: Տեսակավոր ցանքերի գետնային և լաբորատոր վերստուգում:

Հասարակական-արտադրական աշխատանք: Գործնական վարժությունները. 1) սերմերի ստուգման դժուր փորձերին նախադատրաստվելը. վար. 2) ցանել շարքացանով. 3) արհեստական խաչաձևում. 4) խնամել տեսակավոր ցանքերը (ամառը, արձակուրդների ժամանակ):

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐԳՈՒՄԸ
(8 ժամ, վորից 4 ժամ ՄՏԿ-ում)

Առանձին գետալներ պատրաստելը՝ գյուղատնտեսական մեքենաները վերանորոգելիս: Դետալների ստուգումն ըստ զծաղրի:

Պատվող գետալների սարումը, առանցքակալներին տեղակայելը, առաջաշարժ գետալները սարելը: Եքսկուրսիա ՄՏԿ-ի վերանորոգման կայանը՝ «Փրեզերի հաստոց» թեմայի շուրջը: Ֆրեզերի հաստոցի հիմնական մասերը. հենոց կնձիթով, սեղան, իլիկ, ավտոմատիկ մատուցման մեխանիզմ, արագություն և մատուցման արկղ. Փրեզերի հիմնական աշխատանքների ցուցադրում:

ԱՄԱՌԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ
ԿԱԶՄԵԼՈՒՆ ՅԵՎ ՀԱՍՄԱՐԱԿԱԿԱՆ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼԸ (1 ժամ)

Ամառային աշխատանքների սղան կազմելը:

Սելեկցիոն աշխատանքներ. սելեկցիոն աշխատանքները տարվում են դպրոցական հողամասում: Հատկացված հողակտորի չափը 10 մ²: Որչեկաներ՝ լորավոր բույսեր:

Սերմաստուգման փորձեր. սերմաստուգումը տարվում է հիմնականում կոլտնտեսությունում, տեղական գյուղատնտեսական փորձնական կայանի կողմից կազմած սխեմայով:

5. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ (1 ժամ)

Տասերորդ դասարան

1. ԱՄԱՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (1 ժամ)

Ամառային փորձնական աշխատանքների արդյունքների ամփոփումը: Եքսպոնատների ընտրություն ցուցահանդեսի համար:

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԱՐԺԻՉՆԵՐ
(19 ժամ, վորից 8-ը լաբորատոր գործնական)

Գյուղատնտեսություն մեջ կիրառվող շարժիչները տեսակները: Կենդանի շարժիչներ, նրանց աշխատանքի բնութագրությունը (արագությունը և ուժ, նորմալ աշխատանքի պայմանները): Յեղների աշխատանքը գյուղատնտեսության մեջ մեքենայական բարձր կիրառելու հիմնական եռանդները: Լոկոմոբիլ, տրակտոր, ելեկտրաշարժիչ: Կենդանի և մեխանիկական շարժիչների ոգտակար գործողության գործակիցը:

Տրակտոր.

ա) Տրակտորի շարժիչի կառուցվածքը և աշխատելու պրոցեսը: Շարժիչի հիմնական մասերը, նրանց փոխադրեցությունը: 4 տակտային և 2 տակտային շարժիչների աշխատելու պրոցեսի սխեման: Շարժիչի մասերը: Գլան, գլանի ճախարակը, գլխիկը, կատեր: Շուրավիկ-մխոցային խմբակ: Մխոց: Մխոցային ուղեր—տարբերությունը շոգեմեքենայի մխոցից: Գազի բաշխումը. ներծծող և դուրս վանող փականի նշանակությունը: Բաշխիչ լիսեր. բուռնցքների և հրիչների նշանակությունը: Շարժման փոխանցումը ծնկավոր լիսեռից բաշխիչ լիսեռին:

բ) Շարժիչը հովացնելը և յուղելը: Հովացնելու նպատակը և սխեմաները: Ռադիատորների ձևերը: Յուղելու նշանակությունը և յուղելու սխեման ծնչման տակ, ցայելով ու համակցված յեղանակով:

Քսելու յուղերը և նրանց կիրառման պայմանները: Առանցքակալները, նրանց կառուցվածքը:

գ) Մեկու սխեման և կարբյուրացիան: Այրվող բաղադրությունը ստանալը: Բենդինի և նավթի հատկությունները:

Մեկու սխեմանում մտնող մասերը: Կարբյուրատորի, ոգտամարիչի, վակում-թեշտերի դերը: Պտույտների քանակի ռեգուլյատորը: Կարբյուրատորի աշխատելու սխեման:

Այրվող բաղադրության մատուցումը գլանին, տաքացնելը: Տաքացնելու ջերմաստիճանը կարգավորելը: Նորմալ խառնուրդ: Հարուստ և աղքատ խառնուրդ, հատկանիշները:

դ) Տրակտորի ելեկտրաառքավորումը: Աշխատանքային խառնուրդը ներքին այրեցման շարժիչում կպցնելու միջոցները: Ելեկտրական կայծով կպցնելը: Մոմերը և լարերը, նրանց անաարք լինելը և խնամքը:

Մագնետոյի տիպերը և գործողության սխեման—հիմնական դետալները դերը (կապ Ֆիդիկայի հետ):

Խարխախի տիպի (Բոշ) մագնետոյի համեմատությունը ոտտորային (Սցինտիլ) տիպի մագնետոյի հետ: Տրակտորը լուսավորելը: Վառելու և այրելու սխեման խնամքը:

ե) Տրանսմիսիան և տրակտորը քանցնող մեխանիզմը: Շղթայակցման կցորդի կառուցվածքը և նշանակությունը: Արագության տուփի կառուցվածքը—սխեման. փոխանցումը շարժիչի փոխանակին և կարգանի լիսեռին: Յետևի փոխանցում: Դիֆերենցիալի նշանակությունը:

Արգելակ: Ղեկավարման մեխանիզմի կառուցվածքը, ղեկավարման լծակները: Անվային և թրթուռային տրակտորները քանցնող մեխանիզմը:

զ) Տրակտորի աշխատելու բաղանը: Տրակտորի ուժը փոխանակի և կեռի վրա: Ոգտակար գործողության քարշի գործակիցը: Տրակտորի ուժն ոգտագործելու գործակիցը: Շղթայակցման մեքենաների ընտրությունը:

Լաբորատոր-գործնական աշխատանքներ. ծանոթանալ տրակտորի հիմնական մասերին (քանդված վիճակում):

Ծանոթանալ մխոցային խմբակի կառուցվածքին: Գործնականորեն ուսումնասիրել գազի բաշխումը:

Ծանոթանալ վառելու սխեմանին:

Ծանոթություն. խոտանացած տրակտոր և սահաստային մասեր. չլինելու դեպքում կազմակերպել եքսկուրսիա դեպի վերանորոգման արհեստանոց:

Հասարակական-արտադրական աշխատանք. 1) Նախապատրաստական աշխատանքներ տրակտոր քանցնելու համար: Վառելանյութ լցնելը. ռադիատորը ջուր լցնելը: Յուղելը: 2) Տրակտորը գործի գցելը: Կարբյուրատորը կարգավորելը, վառելը: Ուսումնական վարժություններ տրակտորով: Գազը ղեկավարելը և վառելը՝ շատ և քիչ պտույտներ ստանալու համար: Առաջին, յերկրորդ և յերրորդ արագություններն ու յետ տալը: 3) Ուսումնական ուղերթ տրակտորով: Տեղից շարժելը, ուղիղ յերթ, դարձում: 4) Տրակտորով աշխատելը. գոթանով վարելը, սկավառակելը:

Ծանոթություն.— Տրակտորի գործնական ուսումնասիրություն և յերթի ղեկավարությունը կատարվում է ՄՏԿ-ի աշխատակիցների կողմից:

3. ԵԼԵԿՏՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԵԼԵՄԵՆՏՆԵՐԸ
(8 ժամ, վորից 2 ժամ լաբորատոր-գործնական և 2 ժամ
եքսկուրսիա)

Ելեկտրոններգիայի առավելություններն եններգիայի մյուս
առեսակների հանդեպ: Ելեկտրոններգիայի կիրառման զանազան
յեղանակները: Ելեկտրոններգիայի կիրառումը գյուղատնտեսու-
թյան մեջ (վարը, կալսելը, տեսակավորելը, կերեր պատրաստե-
լը, կիթը և այլն):

Ելեկտրոններգիայի նշանակությունը գյուղատնտեսական
պրոցեսներում և գյուղատնտեսական աշխատանքների մեքենա-
յացման գործում: Ելեկտրոններգիայի կիրառումը լուսավորու-
թյան համար:

Լուսավորության ցանցը: Ելեկտրոններգիայի փոխանցումն
ելեկտրականից մինչև սպառողը: Լուսավորության ցանցի հա-
սարակ հաշվումները:

Ոդային անցկացումը (воздушная проводка) մադիստրալից
(գլխավոր հանգույցից) ճյուղավորումները, անցկացումը շենքի
ներսում: Լուսավորության ցանցն անցկացնելու կանոնները:
Տրակտորի ելեկտրալուսավորությունը: Տրակտորի գեներատորը,
անցկացման կառուցվածքը, լամպերի և անջատիչի միացումը:

ԼԱԲՈՐԱՏՈՐ-ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաղորդիչներ կցելը և անջատելը: Ելեկտրատարման (ելեկ-
տրոմոնտաժային) ապարատների լիցքը: Վահանների վրա լա-
մպեր անցկացնելու ուսումնական սխեմաների սարելը (մոնտաժ):
Եքսկուրսիա դեպի ելեկտրական:

Գաղափար ելեկտրական կայանի կառուցվածքի մասին:

Ծանոթություն սկզբնական շարժիչին, գեներատորին, տը-
րանսֆորմատորին և բաշխիչ վահանին: Ելեկտրական հոսանքի
հետ վարվելու անվտանգության կանոնները:

ՌԱԴԻՈՏԵԽՆԻԿԱ

Լրացուցիչ թեմա ի հաշիվ աշակերտների հառարակական աշ-
խատանքների ժամանակի բյուջեի:

Անտենայի և հողի հետ միացնելու կառուցվածքը: Ռադիո
ընդունիչի տեղակայելը: Դեզեկտոր ընդունիչի կառուցվածքը:

Վամպային ընդունիչներ: Հակադարձ կապի կիրառումը: Ցածր
հաճախականություն զորացուցիչը:

Ընդունիչները մարտկոցից սնելը: Ռադիոյի խնամքը. անկա-
նոնությունները վերացնելը:

ԼԱԲՈՐԱՏՈՐ-ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ստուգել կանոնավոր լինելը և թեթև վերանորոգումներ կա-
տարել: Սարել և միացնել ընդունիչի մասերը:

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ (6 ժամ)

Գյուղատնտեսության արտադրության կազմակերպման հի-
մունքները: Գյուղատնտեսական արտելի Ստալինյան կանոնա-
դրությունը՝ վորպես կոլտնտեսական կյանքի հիմքը: Խորհուր-
տեսությունների և կոլտնտեսությունների գյուղատնտեսության
պլանավորումը և մասնագիտացումը: Կոլտնտեսությունների
համար հողը տեխնիկական բազա ստեղծելը՝ յերկրի խողովա-
տրացման և ՄՏԿ-ի շինարարության հիման վրա: Արտադրական
միջոցների կազմակերպումը: ՄՏԿ-ն վորպես դրա հիմքը: Կոլ-
տնտեսությունների արտադրական միջոցների համակցումը մե-
քենայական բարձր տեխնիկայի հետ: Դարչի ուժի կազմակեր-
պումը:

Տնտեսության համար պահանջվող կենդանի ուժի և մեխա-
նիկական ուժի ու գյուղատնտեսական ինվենտարի վորոշումը:

Տրակտորային խմբի ու կոլտնտեսական բրիգադի աշխա-
տանքների համակցումը: Ընդհանուր հասկացողություն փոխա-
դրական միջոցների և շենքերի կազմակերպման մասին:

Հասարակական սեփականությունը կոլտնտեսական արտա-
դրության հիմքն է: Կոլտնտեսականների անհատական շահերի
համակցումը հասարակական շահերի հետ:

ԴԱՇՏԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՆԱՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Կոլտնտեսության հողերի ամրացումը մշտական ոգտադործ-
ման համար: Տերիտորիայի կազմակերպումը և ցանքաշրջանա-
ռությունը: Ցանքաշրջանառությունը վորպես բերքատվություն-

նը բարձրացնելու միջոց և պլանային առաջադրույթյունների ու արտադրութային մասնագիտացման կիրառում:

Առանձին ազդրոտելինիկական յեղանակների դերը բերքատուլությունը բարձրացնելու ուղղությամբ: Յանքաշրջանառության մեջ կիրառվող ազդրոտելինիկայի սխտեմը:

Տիպական զոնային ցանքաշրջանառության կազմակերպումը: Առաջատար կուլտուրայի տեղը ցանքաշրջանառության սխտեմում. նախորդող և հաջորդող կուլտուրաներ:

Ցանքաշրջանառության ուտացիա: Շրջանի տիպական ցանքաշրջանառությունները: Նրանց բնութագրումը: Ցանքաշրջանառության դաշտերում բրիգադներին ցանքաշրջանառության յենթակա վորոշակի հողմասերի ամրացնելը:

Կոլտնտեսային ապրանքային ֆերմաներում և խորհտնտեսություններում անասնաբուծության կազմակերպումը: Հոտի կազմակերպումը և կերի բազան:

Աշխատանքի կազմակերպումը կոլտնտեսություններում. բրիգադը վորպես արտադրական հիմնական բջիջ. մշտական արտադրական բրիգադի կազմակերպման սկզբունքները: Արտադրական պլանավորում: Մշակելու նորմաները: Գործավարձային սխտեմ: Աշխատանքի գնահատումն աշխորերով:

Գյուղատնտեսական աշխատանքների դասավորումն ըստ խմբերի: Դաշտային կարեւորագույն աշխատանքների բարձր գնահատումը: Սոցմրցում և հարվածայնություն. ստախանովյան և բուսիգինյան ձևի աշխատանքները գյուղատնտեսության ասպարեղում. Դեմճենկո: Աշխատանքների հաշվառման կազմակերպումը: Աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները խորհտնտեսություններում:

ՅԵԿԱՄՏԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԿՈԼՏԵՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Յեկամտի և բերքի կուտակումը և բաշխումը կոլտնտեսություններում: Պետական պարտավորությունների կատարումը և ՄՏԿ-ի հետ հաշիվների փակումը: Հանրայնացրած ֆոնդերի կազմակերպումը կոլտնտեսություններում: Յեկամուտների բաշխումը կոլտնտեսականների միջև:

Աշխորը վորպես կոլտնտեսականների մասնակցության միավոր յեկամտի բաշխման մեջ:

5. ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԵԼԸ ՅԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ (2 Ժամ)

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ի դարգացումն սույն ծրագրի հասարակական աշխատանքները՝ դարոցում կարող են կազմակերպել հետեյալ խմբակները. 1) ջերմոցային աշխատանքների խմբակ, 2) միջուրինյանների խմբակ (հիմքում—պողա—պարարապողային գործը), 3) սելեկցիոներների խմբակ (դաշտային կուլտուրաների սելեկցիոն աշխատանքները խորացնելու ուղղությամբ), 4) ծաղկաբուծների խմբակ, 5) ճաղարարուծների և թռչնաբուծների խմբակ, 6) մեղվաբուծների խմբակ, 7) ձիերի չեֆությունը վերցնող խմբակ, 8) գյուղատնտեսական անասունների մատղաշների չեֆերի խմբակ, 9) գյուղատնտեսական մեքենաների ու արդիականացման կոնստրուկտորների խմբակ:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ 1

ԳՈՐԾԻՔՆԵՐ ՅԵՎ ՀԱՐՄԱՐԱՆՔՆԵՐ

V Դասարան

ՄԵՏԱՂԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

I. Նշող գործիքներ և հարմարանքներ

1. Նշման սալ
2. Անկյունարդ
3. Գծիչ և կետիչ
4. Մասշտաբ
5. Կարկին
6. Կորակարկին
7. Ներսաչափ

II. Սեղմիչ հարմարանքներ

1. Սեղանի և զուգահեռ մամլակներ
2. Ձեռքի մամլակներ
3. Սեղմիչներ

III. Մշակող գործիքներ և հարմարանքներ

1. Խարտոցներ
2. Հատիչ և խաչհատիչ
3. Սետասղոցներ (НОЖОВКИ)
4. Մուրճեր
5. Գլանաձև և փետրավոր ծակիչներ
6. Ծակահարներ և սեղմիչներ
7. Զողիչներ
8. Ձեռքի դրելներ
9. Զողման լամպ

Ծակիչ հաստոց

Նրա գլխավոր մասերը՝ իլիկ, ուժտարի մեխանիզմ, մաստուցման մեխանիզմ, սեղան: Ծակիչ հաստոցի հարմարանքները՝ փայտ և մետաղ ծակելու հաստոցներ:

Աշխատանքային պրոցեսները

1. Պատրաստվող առարկայի գծագիրը
2. Նշում
3. Նշած գծով սղոցում
4. Հատման պրոցես մամլակի և սալի վրա
5. Խարտոցում
6. Դրելով ծակում
7. Ծակիչ հաստոցի վրա ծակելը
8. Շարժական և անշարժ իրեր գամելը
9. Թեթև խառնածույլով և անագով զողելը

VI Դասարան

ԳՈՐԾԻՔՆԵՐ ՅԵՎ ՀԱՐՄԱՐԱՆՔՆԵՐ

1. Նիշնշման գործիքներ՝ գծաքաշ, անկյունարդ
2. Չափող և ստուգող գործիքներ. ձողակարկին, անկյունաչափ, ստուգման ճիշտ կանոնները:

Մշակվող գործիքներ

1. Մանեկահատ (метчик), պտուտահատ (плашера)
2. Շրջատաշ կտրիչներ—միջանցիկ, հատող. յենթա—կլարիչ
3. Շրջատաշ հաստոցի փամփուլներ
4. Սարման (մոնտաժի) գործիքներ
ա) Մանեկների բանալի և բացվող բանալի
բ) Պտուտակիչներ

Շրջատաշ հաստոց (խառատի)

Խառատի հաստոց: Նրա գլխավոր մասերը՝ ստանին, առաջի և հետևի կորաններ յենթակալ (суппорт), բանող մեխանիզմ, մաստուցման մեխանիզմ:

VII Դասարան

ԳՈՐԾԻՔՆԵՐ ՅԵՎ ՀԱՐՄԱՐԱՆՔՆԵՐ

1. Չափող գործիքներ՝ մանրաչափ և այլն
2. Դարբնոցի գործիքներ՝ կռան, ձեռքի մուրճ, հատիչ, հղկիչ, ծակահար

3. Սեղմիչ, զնդան, նրանց նպատակը, ձևը և մատերյալը.

4. Դարձակման գործիքներ, հողի նախապատրաստումը

5. Զերմային մշակման գործիքներ և հարմարանքներ՝ հրաչափ, սառեցնող հեղուկներ—իրերը դուրս հանող հարմարանքներ.

Հաստոցներ և հարմարանքներ

1. Դարբնոցի քուրա

2. Դարբնոցային մուրճ

3. Մետաղ տաքացնելու վառարան

4. Վազրանկա և ելեկտրական վառարան

5. Մետաղամշակման հաստոցներ—ռանդա, ֆրեզ հղիչ, նրանց նպատակը և աշխատանքը:

Փայտամշակման գործիքներ և հարմարանքներ

V Դասարան

Մետր, անկյունարդ, քանոն, կարկին, աղեղնասղոց, մետակ ռանդա, կրկնակի ռանդա վիսաֆուգան (փոքր չափերի), տափա-կադուր, չաղափ, կինդարներով և պարուրած ծակիչ, պտուտակիչ, քուրճ, թակ, դազգյահ (վերատակ), դազգյահի սեղմող հարմարանքներ:

VI Դասարան

Նախորդ դասարանում գործածվող գործիքները և անկյունաչափ, գծաքաշ, քողրակտուր (ցիրկուլյարնի) սղոց, չաղափ զգալաձև փետուրով, խարտոցներ, կարկին:

VII Դասարան

Նախորդ դասարաններում գործածվող գործիքները:

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Ա

1. Աճում—Рост

2. Աշխատանքային տեղ—Рабочее место

3. Ախտահանում—Протравливание

4. Անխափոր տրակտորներ—Колесные тракторы

5. Արատ—Порок

6. Ածխածնային—Углекислые

7. Ավաղի—Песочные

8. Աուլույա—Люцерна

9. Ակոս—Резьба

10. Անանարակ—Скотный двор

11. Անանարուժական—Ветеринарный

12. Արդյունավետություն—Продуктивность

13. Արդեւանիւլ—Храповик

14. Առանցք—Ось

15. Առանցքակալ—Подшипник

15. Առաջի—Передняя

17. Աղեղնասղոց—Лучковая пила

18. Արձակուրդ—Отпуск

19. Արմատապտուղներ—Корнеплоды

20. Ազուցահան—(ռանդա)—Шпунд—гобель

21. Ակոսահան (ռանդա)—Фельд—гобель

Բ

22. Բնափայտ—Древесная

23. Բ ա հ—Лопата

24. Բերքապտուղյուն—Урожайность

25. Բանող մաս—Рабочая часть

26. Բռնկող մոմ—Запальная свеча

27. Բոլորակաւոր սղոց—Циркулярная пила
 28. Բանվածքային—Подслочный
 29. Բացթող—Пропуск
 30. Բրիչ—Мотыга
 31. Բռնակ—Шуруп
 32. Բանվածք—Изделие
 33. Բարձակ—Кронштейн
 34. Բուկը լցնել—Окучивать

Գ

35. Գլան—Цилиндр
 36. Գործակից—Коэффициент
 37. Գլանիկ—Ролич
 38. Գործավարձային սխտեմա—Сдельщина
 39. Գործիքային—Инструментальный
 40. Գոմաղբ—Навоз
 41. Գերվաղ ցանք (վար)—Сверххранный сер (пехоты)
 42. Գրտնակելը—Прокат
 43. Գաժել—Заклепать
 44. Գծիր (մաթիթար)—Дрель

Դ

45. Դիմացկունություն—Прочность
 46. Դարձում—Поворот
 47. Դետալ—Деталь
 48. Դիմադրություն—Сопротивление

ՅԵ

49. Յերիզասղոց—Ленточная пила
 50. Յենթանեցով (յենթակալ)—Суппорт
 51. Յեղևնի—Ель
 52. Յեղրատում—Раззенкование
 53. Յենթակարիչ—Подрезной резец
 54. Յերիթ—Шпонка
 55. Յերիթավոր—Шпифтовый

Զ

56. Զորացուցիչ—Усилитель

Է

57. Ելեկտրապողպատ—Электросталь
 58. Ելեկտրական հաղորդիչ—Электрический проводник

Թ

59. Թաղում—Отжиг
 60. Թափանիվ—Маховик
 61. Թրթռույին տրակտոր—Гусеничный
 62. Թերթային—Листовая
 63. Թեք—Откосный

Ճ

64. Ժանանիվ (ստամանիվ)—Шестерная

Ի

65. Իլիկ—Шпиндель
 66. Իրան—Корпус

Լ

67. Լուծույթ—Раствор
 68. Լիսեն—Вал

Խ

69. Խածիչ—Кусачка
 70. Խառնածույլ—Сплав
 71. Խառնուրդ—Смесь
 72. Խտացում—Уплотнение

73. Խոռհարմեքենա—Косилка
74. Խաչաեղում—Скрепчивание
75. Խարտոցում—Опилка
76. Խուի (կախարիչ) Крышка
77. Խոտան—Брак

Մ

78. Ծնդածն—Коленчатый
79. Ծաղելը—Изгибание
80. Ծաղելը—Пробивание, сверление
81. Ծլունակություն—Всхожесть
82. Ծիլ—Всход
83. Ծակհատ—Бородок

Կ

84. Կորան—Бабка
85. Կառանի—Стопорная
85. Կնճիթ—Хобот
87. Կարգավորել—Урегулировать
88. Կորածող (շարժածող)—Шатун
89. Կցորդիչ—Муфта
90. Կ ե ո—Крюк, крючек
91. Կապտավուն տեսք—Синева
92. Կլանելու ընդունակություն—Поглатительная способность
93. Կեչի—Береза
94. Կարիչ—Резец
95. Կաղնի—Дуб
96. Կարծրություն—Твердость
97. Կարելը, հանելը—Нарезка
98. Կանգնակներ—Стойка
99. Կերարաժին—Кормовая дача
100. Կենդանի քաշ—Живой вес
101. Կերպարանափոխում—Преобразование
102. Կարժառ—Машовало
103. Կալուել—Молотить

Հ

104. Հրիչ—Толкатель
105. Հենոց—Станина
106. Հարմարանք—Приспособление
107. Հաստաչափ (կորակարկին)—Кран, циркуль
108. Հոլանդիան—Вал
109. Հալաքելը—Уборка
110. Հզորություն (կարողություն)—Мощность
111. Հող—Почва
112. Հերուն—Шило
113. Հնձող մեքենա—Жнейка
114. Հեղույս—Болт
115. Հաշվառում—Учет
116. Հակողություն—Надзор
117. Հղիություն (կովի)—Стельность
118. Հենակ—Подручник
119. Հատապտուղ—Ягода
120. Հաղարջ—Смородина
121. Հաղորդիչ—Проводник
122. Հակակշիռ—Противовес
123. Հավանություն տալ—Апробация
124. Հոլովակ (փոկանիվ)—Шкив
125. Հողակապ—Шарнир
126. Հաստոց—Станок
127. Հատիչ—Зубило
128. Հատում—Отрубание, рубка
129. Հերկ—Вспапка

Ձ

130. Ձողակարկին—Штанген—циркуль
131. Ձգում—Вытяжка
132. Ձող—Рейка
133. Ձողալին—Речный

134. Զախարակ—Блок
135. Ճուլկիներ—Чеки

Մ

136. Միջակտուր սղոց—Сквозная пила
137. Մխում—Закал
138. Մատուցում—Подача
139. Միջակա—Промежуточный
140. Մխոց—Поршень
141. Մանրաթել—Волокно
142. Մածուցիկություն—Вязкость
143. Մեխանիզմ—Механизм
144. Մուրախին—Стойловый
145. Մակարդասղոցում—Наградное пиление
146. Մատաչ—Молодняк
147. Մատուցող մեխանիզմ—Механизм подачи
148. Միջանցիկ կտրիչ—Проходной резец

Ն

149. Նրբասող—Лобзик
150. Ներսաչափ—Нутрометр
151. Ներծծող—Всасывающий
152. Նալ—Желоб
153. Ներքին այրում—Внутреннее сгорание
154. Նախածիւում—Пикировка
155. Նորացում—Прореживание
156. Նիշնչում—Размешка
157. Ներտաչում—Растачка
158. Նշանքաչ—Рейсмус

Շ

159. Շարքացան—Рядовой посев
160. Շրջատողում—Ибточка

161. Շղթայակցում—Сцепление
162. Շարժահղորդ—Приводной
163. Շրջանային միացում—Рамочная вязка
164. Շարժիչ—Двигатель
165. Շերտային—Полосовая
166. Շուրտլիկ (մեղեխ)—Кривошип
167. Շաղացան—Разбросной посев
168. Շաղափ—Коловорот

Ո

169. Ողամաքրիչ—Воздухочистатель

Չ

170. Չափրասում—Разведка

Պ

171. Պարարտացում—Удобрение
172. Պտույտ—Оборот
173. Պարանային—Канатная
174. Պտուտակիչ—Отвертка

Ջ

175. Ջերմոց—Параник, теплица

Ռ

176. Ռանդեղ—Строгание

Ս

177. Սածիլ—Рассада
178. Սերմազտիչ մեքենա—Ероочистительная машина
179. Սեպ—Клик

180. Սոճի—Сосна
 181. Սառեցում—Охлаждение
 182. Սերգալում—Сепарирование
 183. Սեղմիչներ—Обжимки
 184. Սկավառակ—Диск
 185. Սրարար—Точильный камень

Վ

186. Վնասալու—Вредитель
 187. Վորդնային—Червячная
 188. Վարակ—Овес
 189. Վերաշակում—Переработка
 190. Վարդակ—Розетка
 191. Վերադիր—Накладное

Տ

192. Տախանել—Бороньба
 193. Տնկելու—Посадочный
 194. Տաշած տախակ—Тес
 195. Տեսակալորում—Сортировать
 196. Տեղակայել—Установить
 197. Տանող—Ведущий
 198. Տարվող—Ведомый
 199. Տախողակ—Шайба
 200. Տնկում—Посадка

Յ

201. Յաքանել—Боронить
 202. Յանող ապարատ—Высевающий аппарат
 203. Յամբար—Подстилка
 204. Յանբաշընալու թյուն—Севооборот

45. 542

ՀՀ Ազգային գրադարան



NL0216083